

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԵԱՐԻԱ

Տարեկան 12 ֆր.
Վեցամսեայ 6 «

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
3 քիւ մեկ ծրարոյ
Տարեկան 14 ֆր.
Վեցամսեայ 7 ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 տղ.
Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԽԱԿ

—o—

Մանուկան տղր
20 ամսիսի



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՅՅԷ

Rédaction du journal

„Iravounk“

VARN A (Bulgarie)

—o—

Редация
на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

—o—

Գրութիւնք եւ
չին տրուիր

ԱՆՋԱՏ ՆԻԻԹԵՐ

Թուրքիոյ հայ վարժարանաց մէջ Ազգ. Պատմութեան դասաւանդութիւնը՝ որ արդէն իսկ չափազանց սեղմութեամբ հետեւանօք ոգին և չիղը կորսնցուցած միայն «մասալ» պատմելու ձեւով կը կատարուէր, կրթական նախարարութեան մէկ նոր քաջած կարգադրութեամբ վերջերս բոլորովին արգիւտեցաւ: Բարեբաղդաբար Պատրիարքը այս արգելքին դէմ դրան բողոքելէ զատ, նոյնիսկ մի քիչ կորով ցոյց տուաւ Երևանի գիւմրու և յայտարարելու թէ՛ մինչեւ որ ըստ առաջնոյն չի թողաւ ընդհանուր Պատմութեան համառօտակի դասաւանդութիւնը, ինք Պատրիարքարան չպիտի երթայ, եւ իրօք ալ քանի մը օր տունէն դուրս չելաւ գրեթէ:

Պատրիարքին ցոյց տուած այս կորովը, որուն պիտի յաջորդէր իր և ժողովականներու հրաժարումը, հարկադրեց Սուլթանը մասնաւոր իրաւունքով մը նախարարութեան հրահանգը բեկանելու:

Օրմանեանի այս յաջողութեան գլխաւոր մէկ պատճառը ըլլալ կը կարծուի նաեւ սա՝ թէ Սուլթանը, արդէն նոր ձերբակալութեանց պատճառաւ Պոլսոյ իսլամ տարրին միտքը գրգռած ըլլալով խոհեմութիւն չէ սեպած հայ տարրն ալ այս միջոցիս գերազգուել, որուն հետեւանք կրնար ըլլալ նոյնիսկ դեսպանաց միջամտութիւնը:

Օրմանեան իր այս փորձիկ յաղթանակով շատ ուրախ Սուլթանին քաբեհաձ իրատէն իմացած ժամուն, յոտս կայսերական գահոյից շնորհակալութեան ուղերձ մը պատրաստելու անձառելի խորհուրդը (°) յղացած է. այդ ուղերձը խառն ժողովոյ անդամներուն ալ ստորագրել պիտի տար: Արդէն ցարդ ստորագրուած և մատուցուած ըլլալու է: Արդեօք Սուլթանին իրատէն շնորհ մըն էր, որուն համար ուղերձ ալ կը մատուցուի:

Մեր նախընթաց թիւով երբ «Ժանօթ» կրկնամսնութեան առ-

թիւ» յօդուածը կարճաճագրէինք այս սիւնակի մէջ, վստահաբար կը յայտարարէինք թէ մեր Եկեղեցւոյ ու անոր սրբազան խորհուրդներուն նուիրակներուն պուկար եկեղեցականներն ալ կը յարգեն ու պիտի յարգեն:

Երբ նոյնիսկ օտարէն կը սպասենք ու կակնկալենք յարգածք դէպի մեր ազգային ամենամեծ հաստատութիւնը, Հայ Եկեղեցին, որչափ աւելի մենք պարտաւոր ենք անոր նուիրակներուն ու սրբութիւնը յարգելու:

Շուրջ տարի մը առաջ մեր եկեղեցական բարձրագոյն իշխանութիւնը, Եկեղ. Կրօն. Ժողովը, արտօնելով հանդերձ եկեղեցւոյ մէջ ազգային լուրջ հանդէսներ կատարել, մասնաւոր չըլլաբերականով մը կարգիւնք ծափահարութիւնը. սա որոշ բացատրութեամբ թէ թատերասրահի կամ զբօսաւայրի յատուկ այդ սովորութիւնը տաճարին սրբութիւնը և դէպի այն մեր տածել պարտական եղած յարգ ու պատկառանքը կը նսեմացնէ: Կրօն. Ժողովը՝ որուն ազգային իրաւունց պաշտպանութեան համար, նոյնիսկ Սուլթանի կամ քին դէմ, քանիցս ցոյց տուած բարոյսացումները արտասահմանի հայ և օտար մամուլէն ծափելի խիցին, իր այդ բացարձակ արգելքը ընդհանուր հայ ժողովուրդին ծանուցանելով միատեղ, եկեղեցական պաշտօնեաներու վրայ պարտք կը դնէր նախանձախընդիր ըլլալ և բնաւ չի թոյլատրել և ոչ մէկ առթիւ ծափահարել տաճարին մէջ:

Ահա այս պարտքէն մղուած, նախընթաց հինգշաբթի օր վարդաւանց հանդէսին առթիւ, Տէր Մարտիրոս Հայրը եկեղեցւոյ բնէն բողոքեց և արգիւնց պղտիկ ծափահարութիւն մը որ կրօն. իշխանութեան արգելքին անգիտակից քանի մը անձեր սկսած էին. բայց Գահանային ազգարարութեան վարկեանապէս համակերպեցան, իսկ հագիւ ժամ մը վերջը դասատուի մը ատենախօսութեան ատեն, երբ ատենախօսը երբեմն յեղափոխականներու կողմէ գործուած խաչագողութիւն-

ները թուելէ յետոյ, Միութեան կուսակիցներուն անկեղծութիւնը կառկածի տակ զնոյ խօսքեր եւս ընել սկսաւ, Դուք կեցող մարդուն, մէկը խաչագողներու համար արտասանուած պարտաւն իրեն ինկած խոշոր բաժինը վարագուրելու մտքով. ծափահարութեան առաջին նշանը տալու աներեսութիւնը ունեցաւ:

Դիւմ մը առաջ անգիտակիցօրէն սկսած ծափը բահանային դիտողութեան վրայ բազմակի կերպով կը դադրի. բայց եկեղեցական բարձր. իշխանութեան արգելքին գիտակից մէկը քանի մը վայրկեան շանցած, քահանային ազգարարութեան ալ յետոյ, երբ յանդգնութիւնը կունենայ հակառակը գործելու, սա կը նշանակէ թէ նա ոչ պատկառանք կը տածէ դէպի ազգային ամենամեծ ու նուիրական հաստատութիւնը, ոչ յարգանք դէպի եկեղեցական բարձրագոյն իշխանութիւնը և ոչ ալ անաճանք ունի հայ ժողովուրդին խառն բազմութեան:

Այդ ժամուն վարդաւանց յիշատակն էր որ կը տօնուէր: Այդ սրբացեալ քաջերը հայ եկեղեցին պաշտպանելու համար իրենց արիւնը թափած էին [թող կարդան Եղիշէն]: Այդ արիւնի յիշատակը յարգելու համար գոնէ մի քիչ պատկառանք պէտք էր ունենալ:

Մենք երբ չի յարգենք մեր սրբութիւնները, մեր հոգեւոր իշխանութիւնը, ինչ իրաւունքով օտարէն դէպ այն յարգանք սպասենք

ԳՈՐԴՈՒՄ

ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՆՑՈՒԴՄԱՐԶԲ

Պոլսոյ մէջ բարձրաստիճանի թիւրքերու ձերբակալումները, արտօնութեամբ ու դատապարտութիւնները՝ որ սովորականէն շատ խիստ հանգամանք մը առած են, ցոյց կուտան թէ Ապտիլ Համիտ իր երկաթեայ վանդակին մէջ ալ ինքզինք ապահով չզգար. և ինչ-

պէս գիտել տուած էր թաւնի խըմբադրականը, նոյնիսկ Սուլթանի լրտեսապետը վստահ չէ իր դիրքին և ժամէ ժամ կը սպասէ «հալածելու զառանցուսէն բռնուած» իր տիրոջ մէկ հրամանին որ կրնայ զինքն ալ Ֆուատ բաշայի վիճակին ենթարկել:

Թուրք ազնուականներու դէմ խստութեանց այս յանկարծական բազմապատկումը, ըստ ոմանց, Բարիզի ազատական թուրքերու համաժողովին հետեւանքը ըլլալ կը կարծուի:

Բայց ինչ որ ալ ըլլայ, անոր բուն պատճառը, սա ճշմարիտ է որ այդ քաջած բռնութիւնները նոյնիսկ Սուլթանը չըլլապատողեն. բուն սարսափ կ'սղգեն. հետեւապէս անոնք ալ կը գգան իրենց համար եւս անտանելիութիւնը իրաց արդի վիճակին. իսկ ժողովուրդին մէջ տիրող խուլ յուզումը ի Պոլիս ծայր աստիճանի հասած է կըսուի արդէն:

Թուրքիոյ կեդրոնին այս յուզումալից օրերուն մէջն է որ Ազատական կամ Ժէօն Թուրքերու ցիր ու ցան և աններդաշնակ ու ժերը ամփոփ և կազմակերպեալ վիճակ մը կը ստանան Բարիզի Համաժողովով, որ գործադիր և մնայուն վարչութիւն մը ընտրեց ծրագիր մը զնելով անոր առջին:

Այդ ծրագրին գործնական միջոցները թէեւ անորոշ են և թերեւս մեզմէ գաղտնի. բայց սա յայտնի և մեկին է թէ այդ մնայուն վարչութիւնը գործ մը կատարելու կոչուած է, ու բնականապէս ձեռքբերել ծալած չպիտի նստի:

Իշխան Սապահէտտին, որ այդ վարչութեան մէջ կը գտնուէր, միայն խօսքի մարդ ըլլալ չհրեւիր. ինք կատարելապէս զգացած է իրկրին բարենորոգման անհրաժեշտ և ահա միջակա պէտքը. ուստի լուրջ գործունէութեան նոր շրջանի մը սկզբնաւորութիւնը կը սպասուի ազատական թուրքերու կողմէ: Այդ գործունէութիւնն է որ հայ և ուրիշ ցեղերու ալ վստահութիւն պիտի ներշնչէ իրենց գործակցելու: Արդէն հրապարակաւ

ու բերանացի կերպով Ազատական
Թուրքերուն դիմել տրուած է թէ
«խօսքը առանց գործի մեծեալ է» :

Այս օրերս կրկին պատերազմի
բազմը Պօէրնեռուն կը ժպտի .
յաղթանակ յաղթանակի կը յաջոր-
դէն Ափ մը ժողովուրդ երկուքուկէս
տարի անընդհատօրէն անհաւասար
պատերազմ մղելէ վերջ ալ պար-
տասելու , յուսահատելու երեւոյթ
բնաւ ցոյց չտար :

Նախընթաց շաբթու մեր բն-
թերցողաց կը հաղորդէինք Պօէր-
հրամանատար Տէմէթի զինք փոսի
մը մէջ պաշարող անգլիական բա-
նակը ճեղքելով ուղտով , որով
Լօրտ Քիշնէրի 5 6 ամիսէ ի վեր
զանի ձեռք ձգուելու համար ի գործ
դրած միջոցները շուրջ կիլոմային :
Անցեալ օր ալ Քիշնէրի մօտ
անգլիական 700 զինուորներէ բաղ-
կացեալ զօրաւաժնի մը Պօէրնե-
րու ձեռք ամբողջովին գերի իյ-
նալը իմացուցած էինք :

Վերջին անգամ ալ արեւմտեան
Թրանսպալի մէջ , աւելի վճռական
յաղթանակ մը տարած են Պօէր-
ները զօրավար Տըլարէյի հրամա-
նատարութեամբ . անգլիացիք 111
մեռեալ և վիրաւոր պատերազմի
զաշտին մէջ թողելէ զատ 201
գերի տուած են . ասոնց մէջն է
Լօրտ Մէթուէն հրամանատարը
ծանրապէս վիրաւորուած : Պօէրք
հետեւեալ օրը այս նոր գերիներն
ալ ազատ ձգած են , բացի Մէ-
թուէնէ , բայց 5 թնդանօթ , զէնք ,

մթերք եւ այլն իրենց պահելով :

Այս վերջին ձախողութեամբ Լօն-
տոնի մէջ մեծ յուզում յառաջ բերաւ .
խորհրդարանին մէջ երբ Քիշնէրի
այս բօթաբեր հեռագիրը կար-
դացուեցաւ , իսլանտացի երեսփո-
խանները որոտապին ծափահարե-
ցին Պօէրնեռուն այդ յաղթանակը .
իսկ կառավարականք բողոքեցին
այս անպատշաճ ցոյցին դէմ :
Հարցում ուղղուեցաւ զինուորական
նախարարին թէ կու՞նո՞ղ Պօէրնե-
րու թիւը ի՞նչ է : Նախարարը մի
քանի անգամ այդ մասին խաբ-
ուած ու խաբած ըլլալով , այս
անգամ չհամարձակեցաւ որոշ բան
մը ըսել , ալ բաւականացաւ սա-
չափ ըսելով թէ Հարաւ-Ափրիկէի
ընդարձակ տարածութեան մէջ
ցիր ու ցան թշնամիի մը որոշ թիւը
աժմ չգիտեր . միայն աւելցուց
թէ Լօրտ Քիշնէրի ուղած բոլոր
օգնական զօրքերը կը զրկուին :
Սակայն ինք չկարծիր որ արդէն
որոշուած զօրագունքերէն և մթերք-
ներէն վատ ուրիշ օգնական զօր-
քեր ալ զրկելու հօրկ ըլլայ :

Պօէրները ժամանակէ մը ի վեր
առանց թնդանօթի էին . այժմ
վերջին երկու յաղթանակով 8-10
թնդանօթի ալ տիրացան . հրա-
ցան և ռազմամթերք ալ աւելցան :
Կը կարծուի թէ այս նոր յաջո-
ղութիւնները Պօէր պատերազմիկ-
ներու թիւը պիտի աւելցնէ , քա-
ջալերելով Բալթիկի մայրաքաղաք-
ներն ալ :

Չարմանայի է որ Պօէրք բնաւ
վհատութիւն և յոգնութիւն ցոյց

չեն տար տակաւին հարաւ Ափրի-
կէի մէջ . և ոչ ալ Եւրոպա գրու-
նուող իրենց պատուիրակները ունէ
զիջում ընելու տրամադիր կը զըտ-
նուին : Վերջերս Ամերիկա զացող
պատուիրակները տեսակցութեան
մը մէջ յայտարարած են թէ իրենք
պետութեանց դիմումներ ընելով
պատերազմը վերջացնելու համար
միջամտութիւն չեն խնդրիր , ալ
քաղաքակիրթ ազգաց միջեւ պո-
լիթիկն ունեցող պատերազմական
օրէնքները Անգլիացոց յայ գել
տալ կը պահանջեն :

Բայց չենք գիտեր թէ հպարտ
Ալպիոնը այս նոր ձախողութեամբ
ներէ վերջ պիտի ըմբռնէ՞ թէ ֆի-
զիքապէս , բարոյապէս , աշխար-
հագրապէս և պատմական ու ցե-
ղային տեսակէտներով զինուած ,
պաշտպանուած և օգտուած ժողո-
վուրդի մը ընդվզումը լոկ բիրա-
նուծով չէ կարելի զսպել :

9.

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ
ԿԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Յաճախ խնդրոյ առարկայ է եղած
Պուլկարահայերու տաճկախօսութեան
հարցը , շատ խօսուած ու գրուած է
այդ մասին , որոնք թէեւ ունեցած
են իրենց բարեբար ազդեցութիւնը ,
սակայն հիւանդութիւնը բոլորովին
բուժուած չենք կրնար համարել , կամ
ուրիշ կերպ ըսելով բուժումը շատ
դանդաղ առաջ կերթայ որովհետեւ
գործադրուած դարմանները վարժարա-
րանական շրջանակներէ գուրս չեն
ելած և պուլկարահայերու ընտանե-

կան խօսակցութիւնը ընդհանրապէս
դեռ տաճկերէն լեզուով կը կատարուի ,
հայ մանուկը մանկապարտէզէն կամ
վարժարանէն կը սկսի հայերէն խօ-
սիլ , պահելով միշտ տաճկերէն լեզ-
ուի հնչումները :

Ո՞վ պիտի սովորեցնէ հայ մանկա-
ւոյն հայերէն խօսիլ , բնականաբար
մայրը , բայց դժբաղդութիւնը այնտեղ
է որ յաջորդող սերունդի մայրերը
չեն կատարել իրենց մայրական պար-
տականութիւնը , եւ այդ առանց
պատճառի չէ :

Յաջորդող սերունդի մայրերը , մին-
չեւ մի որոշ տարիք հայկական նա-
խակրթարաններու մէջ , հազիւ հա-
յերէն խօսիլ կը սկսին ու քիչ մըն
ալ գրել , կարգալ կը սորվին , կը
ձգեն վարժարանը եւ անգամ մըն ալ
ոչ հայերէն գրելու համար գրիչ ձեռք
կառնեն եւ ոչ ալ միջոց ունին հա-
յերէն գրելու ու թերթի մը կարգալու
եւ այն ինչ որ ձեռք լերած էին վար-
ժարանի մէջ փոխանակ աւելի կատա-
րելագործելու , քիչ ժամանակէն կամ
կը մոռնան եւ կամ գիտցած հայե-
րէններն միայն բացառիկ պարագանե-
րու մէջ կը գործածեն : Այսպէս իրա-
կանութիւնը մեզ ցոյց կուտայ որ ,
նոյնիսկ վարժարան տեսած ու քիչ
թէ շատ հայերէն խօսիլ սովորած
պուլկարահայ մայրերու զաւակներն
անգամ երբ վարժարան կերթան ա-
ւելի տաճկերէն կը խօսին քան հա-
յերէն :

Պուլկարահայերու մէջ հայ բար-
բառի ընդհանրացման եւ զարգացման
համար ձեռք առնուած միջոցները կա-
սեցնող կամ դանդաղեցնող այս ար-
գելքը՝ մասամբ դիմագրաւելու , իզա-
կան սեռին հայերէն կարգալու , խօ-
սելու եւ զարգանալու միջոց մը տուած
ըլլալու նպատակով , Շուսուլի ազգ-
ընթերցարանի վարչութիւնը յարաւոր
վայրի մը մէջ , յատկապէս կանանց
համար ընթերցարան մը բացած է :

ՍՈՒԼԹԱՆ ԱՊՈՏԻՆԸ ՀԱՄԻՏ
ՖՐԱՆՍԱՑԻ ՍԵՐՈՒՆԴԷ

Անցեալ տարի Հոռոմի Սիւլալթա լրագ-
րին մէջ , զորոց մը տեսնուած էր ,
թէ՝ Թուրքիոյ Սուլթանը Ապուր Լա-
միտ Բ. մօր կողմանէ Փրանսացի սե-
րունդէ է : Արդի Սուլթանին մամը ,
Սուլթան Ապուր Լամիտ Ա.ին կինը
Փրանսացի ծնած էր Մարթինի քաղա-
քէն , Տիւպիւք Տը Լա Րիվիերի ան-
ուամբ , հօրեղբոր զաւակ Նաբոլէօն
Ա.ին առաջին կնոջ Ժօզէֆինա Պա-
հաբիսի , որուն աղջիկը՝ Նորթեգինա
Պակարիս , Նաբոլէօն Գ.ին մայրն
էր :

Ահաասիկ ինչ պարագաներու բեր-
մամբ Րիվիերի Համիտ Ա.ին կանա-
նոցին մէջ ինկած է : 1788ին ծովա-
նէները գերի բռնած են զինքն , երբ
Մարթինիէն դէպի Փրանսա կուղեւոր-
ուէր նաւով : Պօլիս կը տարուի , ուր
ներքինապետին ուղարկութիւնը գրա-
ւելով Սուլթանին կառավարչութիւն : Բայց
կանանոցի այս գերեզնի , միւսնիւրէն
տարբեր վիճակի մէջ էր :

Փրանսացի՝ երկտասարդուհին իր
լաց ու կոծովը ներքինապետին ու
Միւլթիթին համակրութեանը արժա-
նացած էր , որոնք որոշած էին ա-
ռանց խտուութիւն բանեցնելու համո-
զել զինքը : Այս Սուլթանը անձնապէս
գեղեցիկ եւ գրաւիչ էր : Ինչպէս կը
պատմէ Պ. Բրէյլս իր «Պատմութիւն
Թուրքիոյ» գիրքին մէջ , Սուլթանը
հաճոյալի եւ լեցուն դէմք մը ունի եւ

դեր , դէպի վայր խոնարհուած աչ-
քերով , երկայն կոպեր , վայելուչ
ու սանարուած մօրուք , եւ կարմիր
այտեր , քայած ժամանակ թէպէտ
եւ քիչ մը ծուծ կերեւէր , բայց եւ
այնպէս կանոնաւոր եւ գեղեցիկ էր
քալուածքը : Այսպիսի արտաքին տես-
քովը ու նուազ համբերող եւ ներողա-
միտ վերաբերմամբը երկտասարդ աղ-
ջկան սէրը գրաւած է , որ Կայսերական
կանանոցի ամենէն սիրելի Սուլթա-
նուհին եղած էր—այսինքն պաշտօնա-
կան ամուսինն Բնակատ բերմամբ նա՝
միշտ կը նայէր Թուրք պետութեան
մէջ Փրանսական շահերուն պահպան-
մանը օգնելու : Այսպէս , զոր օրինակ ,
Տուապէ եւ Մորման ժէնէրալները ,
առժամայն կերպով Պօլիս զրկուած
էին նորեկ զինուորները կարգ ու կա-
նոնի մէջ գնելու ու զինարարներ կա-
ռավարելու համար , որոնք Նոյնիսկ
պալատին մէջ շատ մեծ հովանաւո-
րութիւն եւ պաշտպանութիւն վայե-
լած էին շնորհիւ Փրանսացի Սուլթա-
նուհւոյն . նմանապէս ժէնէրալ Սէ-
պասթիանի , Փրանսական զեապանը
անոր պարտական է ամենակնճոտ
խնդիրներու մէջ ունեցած բոլոր յա-
ջողութիւնները :

1789ին Սեպտեմբեր 2ին ծնաւ իր
Սուլթան Մահմուտ Բ. զաւակը , 19րդ
դարու ամենախելացի ու քաղաքա-
կիր Սուլթաններուն միակը : 1849ին
մեռաւ նա , զահաժառանգ ձգելով իր
Ապուր Լամիտ Ա. զաւակը , արդի
Սուլթանին հայրը : Հետեւաբար հի-
մակուան տերապետող Սուլթանը Ժո-
զէֆինայի հօրեղբոր աղջկան թոռը

կիւնայ , Ժուլնալ լրագրերը այս մա-
սին էտմոնտ Լա Բուալի արտասպա-
մէկ յօդուածը՝ Փրանսացի Սուլթա-
նուհին քրոջ զաւակնեմէն Ուրիսթիան
Ժիրու Տը Վիլիսթայի պատմածին վրայ
հիմնելով գրուած էր , որ՝ օգախօս
Ժիրու Տը Վիլիսթայի ազգական եւ
Պօնաբարթ իշխանուհիին ալ հօրեղ-
բոր աղջկան թոռն է : Ինքը ոչ թէ
թէ մինակ այս ազգականութիւնը կը
կը հաստատէ , այլ կը յաւելու նաեւ
թէ՝ այդ պարագային մէջ , նախկին
Վալիսթա Սուլթանը ազգականուհի կիւ-
նայ Նաբոլէօնի եղբայր Դանասայի
իշխան Լիւսիէն Պօնաբարթին : Ինչ-
պէս նաեւ հօրեղբոր աղջիկն է եղբը
Ծիկին Պլիմանի , որուն հետ Լիւսիէն
Պօնաբարթը երկրորդ անգամ ամուս-
նացաւ 1802ին : Ծէ Լա Վիլիսթի մահ-
ուանէն առաջ կը յայտնի ըլլար որ
թիւնը ու կաղաչէ իր որդւոյն թէ՝
արտօնէ իրեն , որպէս զի կաթոլիկ
քահանայ մը կանչել տայ : Զմեռուան
ցրտաշունչ զիշեր մը , Պօլսոյ կաթո-
լիկներու Ս. Անտօն վանքին դուռը
կը զարնէին երկու թուրքեր : Վան-
քին արեղան՝ Հայր Ուրիզոսթոմ կար-
թինայ , Դանասայը քովը կը մտնայ
վախէն երեսը գունաթափուած , ըն-
կերակցութեամբ երկու սեւամորթնե-
րու , որոնցմէ մին արեղային մօտե-
նալով կը ներկայացնէ հրովարտակը :
Յարգելի Հայրը հրովարտակը նայելէն
վերջը կերթայ եկեղեցի , ուր մի
քանի վայրկեան յապաղումէ վերջը ,
ընկերանալով երկու ներքինիներու
կերթայ Ղալաթիա :

Երեքը միասեղ քահանայօրս թիով

մակոյկի մը մէջ կը նստին : Այս մի-
ջոցին ճօխ ու մետաքսեղէններով շքե-
ղապէս զարդարուած գորգապատ սեն-
եակի մը մէջ պսակած էր կին մը չա-
րայար հոգեւաբքի մը մէջ , որուն
շուրջը կը պտտուէր բոխիկ մը երբեմն
երբեմն հիւանդին բազկերակը քննե-
լով : Դրան մօտ գտնուած վանդակա-
պատի մը անդին կողմը երկու գերի-
ներ ուղարկութեամբ հրամաններու կը-
սպասէին : Իսկ մի քանի քայլ անդին
մարդ մը կը կենար , որ ինչպէս կը
տեսնուէր , չէր կրնար աչքերէն թափ-
ուած արցունքները արգելիլ : Կէս գի-
շերը անցած էր , երբ սեւամորթը
մինչեւ գետին խոնարհուած՝ ար-
տաւորդին կըսէ . «հոն է , մոնայ» :
Սուլթանը գլուխը շարժելով հաւա-
նութիւնը կուտայ : Այն ատեն սեն-
եակին մէջ կը մտնայ արեղայ մը .
թագաւորը մահճակալին մօտենալով
կըսէ . «մայր փափագեցար նախահայ-
րերուդ կրօնքին մէջ մեռնելու , փա-
փագդ կատարեցաւ անա քահանայն :
Վանքին արեղան ժամ մը ամբողջ
մտիկ ըրաւ յորդանոս արցունքներով
ի սրտէ արտասանուած մեղանքը եւ
զղջումները , յետոյ արեղան տուաւ
մահճակալ հիւանդին վերջին հաղոր-
դութիւնը : Հետեւեալ օրը Հայր Ուրի-
զոսթոմ երկարօրէն աղօթած է խորա-
նին առջեւ Էմմա Տիւպօք Տը Լա Րի-
վիերի հոգեւոյն համար՝ Սուլթան Մահ-
մուտի մայրը որ արդի պուլկարահայ
Համիտ Բ.ին մամն է :

Թարգմ. Պուլկ. ԹՈՒԴԻՍՅՈՒՆ

ուր Շումլայի ընթերցասէր հայ տի-
կիններն ու օրիորդները, չափաթե-
մէկ երկու ցերեկ պիտի կարողանան
կարգալ բոլոր այն հայերէն թերթերն
ու հանդէսները զորս կրտսեայ հայ-
կական ընթերցարանի վարչութիւնը:
Այս առթիւ աւելորդ չենք համարեր
մեր խորին շնորհակալութիւնը յայտ-
նել իր կոչման գիտակից ազգային
Ընթերցարանի պատուարժան վարչու-
թեան, որուն լուրջ անդամներու հա-
մարաշխ գործունէութիւնն ու ջան-
քերը մեզ իրաւունք կուտան յուսալ
որ այս ձեռնարկը՝ վաղանձուկ երեւ-
ոյթ մը չի պիտի ըլլայ Շումլայի
հայուհիներու համար:

Ա.Լ.ԻՍ

Շումլա, 1 Մարտ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՐԻՋ, 10 Մարտ

ԲԱՐԻՋԻ ԹՈՒՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ.—

Բարեգի թուրք ուսանողները՝ ահա
ձեզի ահագին բառ մը կամ փոքրիկ
նախադասութիւն մը որուն արտաքին
ձեւը կարծես թէ՛ կը թուի պարու-
նակել նշանակութիւն մը կամ գաղա-
փար մը՝ եթէ վերոյ վերոյ ահարկ
մը ձգենք անոր վրայ: Բայց եթէ խո-
րը թափանձնեք այդ երկք բառերուն
նշանակութեան, միայն պարագու-
թիւն է. ուստի եւ դառն յուսախա-
բութեան կը հանդիպենք. ի՞նչ է
թուրք ուսանողութիւն կոչուածը:

Այստեղ բաժանում մը ընել հարկա-
ւոր է: Կան կարգ մը ուսանողներ
կամ այդ տիպի կրողներ որոնք
թրքահայտակներ պէտք է անուանել
եւ որոնց մէջ կը հաշուին հայեր,
յոյներ, հրեաներ, Սուրիացի քրիս-
տոնեաներ, եւն. կան նաեւ ուրիշ
կարգ մը երիտասարդներ որոց մե-
ծագոյն մասը բաղկացած է բուն թուր-
քերէ, ասոնց մէջ կը գտնուին նաեւ
մէկ կամ երկու հայեր, մի քանի
յոյներ եւ հրեաներ: Այս երկուորդ
կարգին պատկանողներու թիւը 15էն
անդին չանցնիր, անոնք այն ուսա-
նողներն են, որոնց յատուկ ամա-
կաններ յատկացուեցան, ասկէ մէկ-
երկու տարի առաջ՝ թուրք կառավա-
րութեան կողմէն, որոնք սակայն
մէկ կամ երկու անգամ ստացան ի-
րենց խոստացուած ամսականը եւ ան-
կէ ի վեր... դեռ կ'սպասեն:

Արդ քանի մը օրերէ ի վեր, մեծ
իրարանցում մը մտած է վերջին կար-
գին պատկանող ուսանողներու մէջ.
որովհետեւ բարձրագոյն հրաման մը
եկած է—ըստ ոման 24 ժամուան,
ըստ այլոց ութ օրուան մէջ—անմի-
ջապէս Բարիճը թողուլ եւ վերադառ-
նալ 4. Պոլս: Պատճառը, Որովհետեւ
ասկէ 15—20 օր առաջ զօգոհներու
ժողով մը տեղի ունեցաւ Բարիճի մէջ
ուր ներկայ են եղեր մինչեւ 20—30
հոգիներ(“)... եւ ահա այս պատճառաւ
օսմանեան կառավարութիւնը տակնու-
վրայ եղած, բոլոր իւր հպատակ ե-
րիտասարդները՝ մանաւանդ անոնք ո-
րոնց մէկ երկու ամսական տուած է՝
ափալ-թափալ ետ կը կանչէ...

Մեզ հաղորդուած ամենաստույգ տե-
ղեկութիւններուն համեմատ, այդ
պարոններուն ամենափայլուն պաշ-
տօններ կը խոստացուին, օր. հիւ-
պատոսութեան, ղեկավարտան քար-
տուղարութեան, արտաքին գործոց

մինիստրութեան մէջ պաշտօն, վերջա-
պէս ամէն տեսակ փայլուն ապագայ
եւ լաւ ամսական եւայլն:

Այս բանիս մէջ երկու կէտ զար-
մանայի են, նախ թուրք կառավա-
րութեան սարսափը, այն. կարգ մը
խեղճ ու կրակ երիտասարդներն ո-
րոնք ուսանողի տիպիսը կրելով
հանդերձ Սուֆլէ եւ Փլուսի սրճարան-
ներուն մշտական զարդը կը կազմեն
եւ որոնք ուրիշ բան չեն խառներ ե-
թէ ոչ իրենց թղթախաղի թերթիկ-
ները եւ որք ուրիշ բան չեն խնդրե-
րթէ ոչ զիրենք հանդարտ թողուն ի-
րենց ըմպիւնները՝ խաղաղ սրտող եւ
յամբ շարժուածքով՝ կոնձիլու:

Երկրորդ զարմանալի կէտը այն է
թէ կառավարութիւն մը ինչպէս կը
զիջանի պաշտօններ յանձնել այդ ե-
րիտասարդներուն, որոց կրթութեան
մակարդակն աւելի քան ողբալի է,
որոց խելքը բան մը չի կտրեր, ո-
րոնք տարրական կրթութենէ իսկ—
բացառութիւն չառ քիչ կայ—զուրկ
են, որոնց համար համալսարանն ու
զարգոյր... սրճարանն է:

Բայց այդ պարոնները իրենց փա-
նիկներ կեանքը պիտի թողուն ու
երթան. սա դեռ խնդիր է:

Մելիք Ս. Դաւիթ-Բեկ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ՎԱՐՈՒՆ

Պ. Վարդօր միայն այսչափ կրնանք
ըսել «Եթէ խելէի համալի մը—
որ կը ներկայացնէ Հայաստանցի
կտրիճի անխաղաղ անկարգիւրը—
բարոյական ձիւքը ունենալու բարձ-
րութիւնը վայելէր, պիտի գիշա-
նէինք աւելի երկարօրէն իրեն պա-
տասխանելու:

Պ. Վարդօն իր անցեալ շահա-
տակութիւնները և զեզումները
կերելի թէ մոռցած՝ այս ու ախ
անկեղծ անձնաւորութեանց վրայ
մուր ըսել կը նկրտի. բան մը որ
զինքը ալ աւելի ծիծաղելի և ախ-
համարհելի կընէ հայ ժողովրդ-
եան առջեւ, այն ժողովրդեան
որ իր արգար վճիռը փակցուցած
է անոր ճակատին... մակգիրով:

Պ. Վարդօն քաջ ըմբռնած
ըլլալով որ երբ բաղձալի միւս-
թիւնը իրականանայ, ինք և
իրեն պէտքերը այլեւս ասպարէզ չի
պիտի գտնեն նոր 28 սնտուկներ,
Տիկ. Մասնախումբի հաշիւներ,
և այլ և այլ այսօրինակ զեզում-
ներ գործելու, կատաղութեամբ և
փրփուր ի բերան իր հայհոյիչ
թերթով կը յարձակի բոլոր ա-
նոնց վրայ, որոնք կը ջանան յե-
ղափոխութիւնը ներկայ անկեալ
վիճակէն բարձրացնել և զայն ժո-
ղովրդային ամէն դասակարգերուն
սիրելի և միանգամայն յարգելի
ընել տալ:

Այս չափով զօհանալով կը զգու-
շացնեմ հասարակութիւնը այդ
տղձալթալ զրիչներու թոյնէն:

ԱՆԴՐԵՅԱՍ Ս. Կ.

Վառնա 5 Մարտ

Շ... Ի ՔԱՅ ՆԱՄԱԿԱԳԻՐ Պ. Յ. ԻՆ

Միութեան Յանձնախումբերու
կազմակերպութեան յառաջգիւմու-
թիւնը՝ ինչպէս զանազան գոյն
ունեցող անձանց՝ նմանապէս կե-
րելի թէ ձեզ ալ ջգային ցնցում
յառաջ բերած է, և դո՛ւք ալ
պղտոր ջուրի մէջ ձուկ որսալու
տենջով, Յանձնախումբի անդամի
մը վրայ զրպարտութիւնները
նիւ կը ջանաք, որպէս զի ժո-
ղովրդեան միակ նպատակը եղող
Միութեան գործը կասեցնէք և
այսպէսով ժամանակ ունենաք անո-
րոշ ատեն մըն ալ ձեր կաշին քաշ-
կըռտել: Եթէ քաջութիւն ունիք
հրապարակաւ հաստատեցէ՛ք Միու-
թեան ու է անդամի դրամաշոր
թուիւնը. եթէ չհաստատեք ձեր
ամբաստանութիւնը, մենք Հայ
Ժողովրդեան առջեւ ձեր երեսին
պիտի պռուռք «խաբեբայ, դրա-
մաշորթ և կեղծարար»:

Պ.

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Գոհութեամբ կիմանաք թէ վա-
րագայ վանքի անվերջանալի խըն-
դիրը լուծուած է այսօր, շնորհիւ
Պատրիարքարանի մէկ խելօք կար-
գադրութեան: Այսինքն վանքին
վանահայրութիւնը որ վանայ ա-
ռաջնորդարանը կը վարէր, յանձ-
նուած է ուղղակի Պատրիարքա-
րանէն կարգուած հոգաբարձու-
թեան մը, որ այլեւս վանայ ա-
ռաջնորդարանի հետ յարաբերու-
թիւն չպիտի ունենայ, այլ իր
հրահանգները Պատրիարքարանէ
պիտի առնէ ու անոր պիտի ներ-
կայացնէ իր հաշիւները: Նոր հո-
գաբարձութիւնը պաշտօնանկ ը-
լած է ամբաստանեալ տնօրէնը և
չէզոք տարրերէ կազմած է պաշ-
տօնէութիւնը:

— Պատրիարքը յատուկ կոնգա-
կաւ արտօնած է Պոլսոյ բժշկա-
կան վարժարանի ուսուցիչներէն
Տ. Նշան Ղուկասեան, որ հայ
բժիշկներուն և դեղագործներուն
գիմելով նպաստ հաւաքէ զաւա-
ռացի կարօտ Հայ ուսանողներուն
համար, որոնք կը յաճախեն բժշկ-
կական վարժարանը, անոնց դըպ-
րոցական պիտոյքը հոգալու և
վկայագրերուն օրինական ծախքը
հայթայթելու նպատակաւ: Պոլ-
սոյ հայ բժիշկներու մեծ մասը
Տիար Ղուկասեանի աշակերտած
են. ուստի իր գիմումները արդիւ-
նաւոր պիտի ըլլան:

— Երկրաշարժէն կործանած Դա-
մախ քաղաքի շրջականներէն վնաս-
ուած են 18 գիւղ. սպաննուած 42
և վիրաւորուած 10 գիւղացի. ըն-
տանի անասուններէն 167 զուրկ.
իսկ 1361 տուններէն 840ը փլած է
և 271ը վնասուած: Ծածկախէն
բաւական հեռու գտնուող 68 գիւ-
ղեր ալ թեթեւ վնասներ ունեցած

են: Ծանրագէս վնասուող գիւղե-
ղերէն հետեւեալները միայն հայա-
բնակ են. Գէնախանի, Քեար-
քեանջ, Մէյսարի, Սաղիան, Գիւր-
ջիվան, Բահլիւն, Քեհաւանգի և
Զօրգեարան: Բարեբաղդաբար
այս գիւղերու մէջ անձի կորուստ
չկայ. բայց տունները մեծաւ մա-
սամբ կործանած ըլլալով ժողո-
վորդը կարօտ վիճակի մատնուած
է. շատեր Ծամախ գիւղած են
նպաստամատոյց յանձնարարուած
րէն օգնութիւն խնդրելու: Տ. Ար-
սէն վարդապետի յանձնարարուած
է գիւղերու ազգայնոց նպաստ
բաշխել և այս նպատակաւ յանձ-
նախումբ մը կազմել:

— Չայն Հայրենեացի մէջ կը
կարգաւք. «Ամերիկեան քաղա-
քացի խաբեղդցի ազգային մը
հայրենիքէն իր նշանածը բե-
րել տալու համար Ուաշինկթըն դի-
մում ըրած ըլլալով՝ պատասխան
ստացած է թէ Ամերիկեան կառա-
վարութիւնը իր աշակցութիւնը կը
նուիրէ և թիւրք կառավարութե-
նէն արտօնութիւն ձեռք կը բերէ
այն պարագային միայն՝ երբ մէկը
իր ընտանիքն ու անչափահաս զա-
ւակները բերել տալ կուզէ: Չա-
փահաս զաւակներ և կամ ուրիշ
բարեկամներ բերելու համար այս
կառավարութեան պաշտպանու-
թիւն յուսալ ապարդիւն է:»

ԲԵՐԱՌՈՒՆՔԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Տ. Սեդրակ Կըրճեան, է. Ֆիլիքըն
(Ամերիկա). — Ձեր երկու տարուան
բաժնեգիրն փոխադէն զրկած չիլը
ձեզ ետ դարձուցած էինք, որպէս զի
անոր մէջ ճիշդ նշանակել տայիք
խմբագրութեան հասցէն: Անկէ ի վեր
երկու ամիս անցաւ, դեռ ուեէ պա-
տասխան չստացանք ձեզմէ. արդեօք
չընդունեցի՞ք մեր նամակը:

— Ամերիկայի մեզ պարտք ունեցող
բաժնեգիրներէն կը խնդրուի որ փու-
թացնեն իրենց բաժնեգիրները:

ԾԱՆՈՒ ԳԻՐԳԵՐ

ՆՈՐ ԵՐԻՄԻԱՍԿԱՆ կամ ՄՐԻՄԻՋ ՀԱՅ-
ԿԱԿԱՆ: Այս երգարանը Բ. անգամ
սպագրուելով աւելի ճոխացած ու բա-
րեփոխուած է, եւ հակառակ գետն
աժանութեանը կը պարունակէ ազ-
գային հին ու նոր գրեթէ բոլոր եր-
գերը:

ՆէՏԱ կամ ՄԵՄԻՍ ՊԱՏԱՍԽԱՆԸ,
Պուլկարիոյ ազատութենէն առաջ
Պուլկար ժողովուրդին թուրքերէ կը-
րած տառապանքները ու անոնց նիստ
ու կացը կը պատկերացնէ:
Գին 50 ՍԱՆԹ.

ՀԱՅՐԵՆԻՅԻ ԶՈՂՅԻՐ, Պատկեր մը
Տաճկահայաստանի իրական կեանքէն,
գրեց Լ. Նահապետեան:
Զեղչեալ Գին 1 ՅՐ.

Այս գիրքերը ստանալու համար
պէտք է գիմել իրաւունքի խմբագրու-
թեան, բոսթի ծախքը 10ական
սանթիմ միատեղ զրկելով. իսկ գիր-
քերու արժէքին համար, եթէ ուրիշ
գիրութիւններ պակսին, կրնուին ուրի
նամակագրուի 10 0/0 զեղչով:

(*) Աղատական Օսմանցիներու Հա-
մաժողովը կականարկէ:

Печ. на Хр. Н. Войниковъ—Варна